ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«Մայրենի», «Հայրենագիտություն», «Այլընտրանքային հաղորդակցում» առարկաների մեթոդական միավորման նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 29-ին: Մասնակցողների թիվը՝ 6:
Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Համեստ Փիրումյան
2. Անի Օհանյան
3. Բասիկ Խուբլարյան
4. Ռուզաննա Բաղդասարյան
5. Լիլի Ալեքսանյան
6. Աննա Աբրահամյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
2. Նախորդ մեթոդական միավորման նիստի որոշումների կատարման վերաբերյալ քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
3. Էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկում (զեկուցող՝ տնօրենի տեղակալ Լ. Մանվելյան):
4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանների քննարկում և, ըստ անհրաժեշտության, առաջարկությունների ներկայացում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
5. Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
6. Երևանի տոնին նվիրված միջոցառման կազմակերպում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
7. Առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրություն (Մայրենի), «Այլընտրանքային հաղորդակցում» առարկա դասավանդող ուսուցիչների անհատական վերահսկողության իրականացում, անհատական դասալսումներ՝ սկսնակ ուսուցիչների մոտ (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):
8. «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով զեկույցի պլանավորում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Հ. Փիրումյան):

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Հ. Փիրումյան ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 29-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված յոթ հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով: Նշվեց, որ օրակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները և ընթացիկ աշխատանքային խնդիրները:

Ընդգծվեց, որ օրակարգում ընդգրկված հարցերն ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, մեթոդական աշխատանքների համակարգմանը և առաջադրված խնդիրների համատեղ քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 2

Մեթոդական միավորման ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքը:

Նշվեց, որ թեմատիկ պլանների մուտքագրման գործընթացը ԴԿՏՀ նոր համակարգում դեռևս ամբողջությամբ ավարտված չէ՝ պայմանավորված համապատասխան դաշտի ուշ գործարկմամբ և որոշ ուսուցիչների՝ համակարգ մուտք գործելու հետ կապված խնդիրներով: Միաժամանակ տեղեկացվեց, որ մուտքագրման աշխատանքները շարունակվում են, և անհրաժեշտ է դրանք ավարտին հասցնել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 10-ը:

Նախագծային աշխատանքների վերաբերյալ նշվեց, որ 2026–2027 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար նախատեսված նախագծային աշխատանքների պլանները մշակվել են սահմանված ժամկետներում և ներկայացվել հաստատության տնօրենի հաստատմանը: Աշխատանքները կմեկնարկեն պլաններում նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Անդրադարձ կատարվեց նաև ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառման իրականացմանը: Նշվեց, որ միջոցառումն իրականացվել է սահմանված ժամկետում՝ 8-րդ դասարանի սովորողների մասնակցությամբ կազմակերպված դասարանական միջոցառման ձևաչափով՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկություններն ու հնարավորությունները:

ԼՍԵՑԻՆ 3

Տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը ներկայացրեց էլեկտրոնային մատյանների վարման և լրացման մշտադիտարկման ընթացքը: Նշվեց, որ ԴԿՏՀ համակարգի գործարկման և որոշ ուսուցիչների համար դրա հասանելիության հետ կապված դժվարությունների պատճառով սեպտեմբերին նախատեսված մշտադիտարկումը հնարավոր չի եղել իրականացնել ամբողջ ծավալով:

Ներկայացվեցին նախնական դիտարկումների արդյունքները՝ անդրադառնալով դասերի գրանցմանը, թեմատիկ պլանների մուտքագրմանը, գնահատումների և բացակայությունների վերաբերյալ տվյալների լրացմանը: Կարևորվեց համակարգի հասանելիության խնդիրների կարգավորումը և էլեկտրոնային մատյանների ամբողջական ու պատշաճ վարումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ՄՄ անդամները հանդես եկան առաջարկությամբ՝ ԴԿՏՀ համակարգի հասանելիության և լիարժեք գործարկման հետ կապված խնդիրներով պայմանավորված՝ ՈՒԴԱՏՊ-ով սեպտեմբեր ամսին նախատեսված էլեկտրոնային մատյանների լրացման մշտադիտարկումն ամբողջ ծավալով իրականացնել աշնանային արձակուրդներից հետո:

ԼՍԵՑԻՆ 4

ՄՄ ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանները՝ նշելով, որ դրանք կազմվել են սովորողների կրթական կարիքներին, անհատական առանձնահատկություններին և ուսումնառության հնարավորություններին համապատասխան: Ներկայացվեց անհատական ուսուցման պլանների իրականացման ընթացքը, ուսումնառության նպատակներն ու նախատեսված աջակցության միջոցները: Քննարկման ընթացքում ՄՄ անդամները ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու առաջարկությունները՝ անհրաժեշտության դեպքում պլանները կատարելագործելու և սովորողների կրթական առաջընթացն առավել արդյունավետ ապահովելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ 5

ՄՄ ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառման կազմակերպման հարցը: Քննարկվեց միջոցառման բովանդակությունն ու անցկացման հնարավոր ձևաչափը՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկությունները և մասնակցության հնարավորությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Դպրոցի գրադարանավարը ներկայացրեց առաջարկ՝ գրադարանում կազմակերպել փոքրիկ ճանաչողական միջոցառում, որի ընթացքում սովորողներին մատչելի և հետաքրքիր ձևով կներկայացվեն գիրքը, գրադարանը, գրադարանավարի աշխատանքը, գրադարանի նշանակությունը, ինչպես նաև գրքերի ստեղծման գործընթացի մասին տարրական տեղեկություններ:

ՄՄ անդամները քննարկեցին առաջարկը և կարևորեցին սովորողների համար գրքի ու գրադարանի մասին պատկերացումների ընդլայնումը՝ նրանց տարիքային առանձնահատկություններին և ընկալման հնարավորություններին համապատասխան նյութերի ու մեթոդների կիրառմամբ:

ԼՍԵՑԻՆ 6

ՄՄ ղեկավարը ներկայացրեց Երևանի տոնին նվիրված միջոցառման կազմակերպման վերաբերյալ նախատեսվող աշխատանքները: Նշվեց, որ միջոցառման նպատակն է սովորողների շրջանում ձևավորել հետաքրքրություն և սեր Երևանի պատմության, մշակույթի և ավանդույթների նկատմամբ: Քննարկվեցին միջոցառման բովանդակությունը, անցկացման ձևաչափը, պատասխանատուների հարցը և սովորողների ներգրավվածության հնարավորությունները՝ հաշվի առնելով նրանց անհատական կրթական կարիքներն ու կարողությունները:

ԼՍԵՑԻՆ 7

ՄՄ ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց ուսումնական տարվա աշխատանքային պլանով նախատեսված՝ առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության ուղղությունները, նպատակներն ու իրականացման մոտեցումները: Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում նախատեսվում է իրականացնել «Մայրենի» առարկայի դասալսումներ 5-րդ դասարաններում, «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի դասալսումներ (5-րդ, 6-րդ, 8-րդ դասարաններ), ինչպես նաև անհատական դասալսումներ սկսնակ ուսուցիչների մոտ (Հովհաննիսյան Վիոլետա, Ալեքսանյան Լիլի) ՝ հետևյալ ժամանակացույցով.

N	Ուսուցչի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1	Նավասարդյան Սյուզաննա	14.10.2026	Այլընտրանքային հաղորդակցում	5-րդ Բ	5-րդ
2	Խուբլարյան Բասիկ	15.10. 2026	Մայրենի	5-րդ Ա	3-րդ
3	Հովհաննիսյան Վիոլետա	15.10. 2026	Այլընտրանքային հաղորդակցում	8-րդ Բ	5-րդ
4	Աբրահամյան Աննա	16.10. 2026	Այլընտրանքային հաղորդակցում	6-րդ Գ	4-րդ
5	Ալեքսանյան Լիլի	17.10. 2026	Հայրենագիտություն	5-րդ Ա	4-րդ

Ընդգծվեց, որ դասալսումների ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դասի նպատակների իրականացմանը, ուսուցման մեթոդների համապատասխանությանը, սովորողների մասնակցությանը և ուսումնառության արդյունքներին: Կարևորվեց դասալսումների արդյունքների վերլուծությունը և անհրաժեշտության դեպքում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումը:

ԼՍԵՑԻՆ 8

ՄՄ ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով զեկուցման պլանավորման հարցը: Նշվեց, որ զեկուցման նպատակն է անդրադառնալ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, դասավանդման մեթոդների կատարելագործման, սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառման և ուսումնական որակի բարձրացման ուղիներին: Կարևորվեց ուսուցիչների մասնագիտական համագործակցությունը, դասավանդման արդյունավետ փորձի փոխանակումը, սովորողների ուսումնառության արդյունքների վերլուծությունը և հատուկ կրթական պայմաններում անհատական մոտեցման ապահովումը:

Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի օրակարգը՝ բաղկացած 8 հարցից: Ապահովել օրակարգային հարցերի քննարկումն ու ընդունված որոշումների կատարումը սահմանված ժամկետներում: Որոշումների կատարման վերահսկողությունը վերապահել ՄՄ ղեկավարին:
2. Հիմք ընդունելով ՄՄ ղեկավարի զեկույցը նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ՝
   2.1. ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառման կազմակերպման և իրականացման, ինչպես նաև նախագծային աշխատանքների պլանների՝ սահմանված ժամկետում մշակման և տնօրենի հաստատմանը ներկայացման գործընթացները գնահատել լավ:
   2.2. ԴԿՏՀ համակարգում թեմատիկ պլանների մուտքագրման գործընթացը համարել թերի կատարված՝ հաշվի առնելով համակարգում առկա տեխնիկական խնդիրները, որոշ ուսուցիչների հաշիվների հասանելիության բացակայությունը, ինչպես նաև համակարգ մուտք գործելու հնարավորություն ունեցող ուսուցիչների կողմից թեմատիկ պլանների լրացման ընթացքում առկա թերությունները:
   2.3. Թեմատիկ պլանների մուտքագրումն ավարտել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 10-ը՝ ապահովելով սահմանված պահանջներին համապատասխան լրացումը և առկա թերությունների շտկումը:
3. Էլեկտրոնային մատյանների վարման վերաբերյալ՝ հաշվի առնելով ԴԿՏՀ համակարգի հասանելիության և լիարժեք գործարկման հետ կապված խնդիրները՝ տնօրինությանը ներկայացնել առաջարկություն՝ ՈՒԴԱՏՊ-ով սեպտեմբերին նախատեսված մշտադիտարկումն իրականացնել 2026 թվականի հոկտեմբերի աշնանային արձակուրդներից հետո: Շարունակել համակարգի հասանելիության խնդիրների կարգավորման աշխատանքները և ապահովել էլեկտրոնային մատյանների ամբողջական ու պատշաճ լրացումը:
4. Ուսումնական գործընթացը կազմակերպել՝
   - հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքները, կարողությունները և ուսումնառության առանձնահատկությունները:
   - Պարբերաբար դիտարկելով ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքների ընթացքը, արձանագրել սովորողների առաջընթացը և գնահատել սահմանված նպատակների իրագործման աստիճանը:
   - Անհրաժեշտության դեպքում, սովորողների առաջընթացի դիտարկման արդյունքների և ՄՄ անդամների առաջարկությունների հիման վրա, ներկայացնելով ԱՈՒՊ-ներում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկություններ:
   - ՄՄ ղեկավար Հ. Փիրումյանին հանձնարարել համակարգել ԱՈՒՊ-ների իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել հարցերի քննարկում ու մեթոդական աջակցության տրամադրում:
5. Ընդունել գրադարանավարի առաջարկը և Գրադարանավարի օրվան նվիրված կազմակերպել ճանաչողական միջոցառում դպրոցի գրադարանում՝ սովորողներին ներկայացնելով գիրքը, գրադարանը, գրադարանավարի գործունեությունը և գրքերի ստեղծման մասին տարրական տեղեկություններ: Միջոցառման նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները հանձնարարել դպրոցի գրադարանավարին և «Մայրենի» առարկայի ուսուցիչ Անի Օհանյանին՝ հաշվի առնելով սովորողների կրթական առանձնահատկություններն ու հնարավորությունները:
6. Հոկտեմբերի 15-ին կազմակերպել Երևանի տոնին նվիրված միջոցառում՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարողություններն ու կրթական կարիքները: Միջոցառման պատասխանատու սահմանել Լիլի Ալեքսանյանին, իսկ ՄՄ անդամներին հանձնարարել ըստ անհրաժեշտության ներգրավվել միջոցառման նախապատրաստման և իրականացման աշխատանքներին՝ ապահովելով սովորողների ակտիվ և ստեղծագործ մասնակցությունը:
7. Հավանության արժանացնել մեթոդական միավորման ղեկավարի ներկայացրած՝ առարկաների դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության գործընթացի վերաբերյալ առաջարկությունները,
   7.1. Իրականացնել «Մայրենի» առարկայի դասալսումներ 5-րդ դասարաններում:
   7.2. Իրականացնել «Այլընտրանքային հաղորդակցում» առարկան դասավանդող ուսուցչի աշխատանքի անհատական վերահսկողություն:

7.3. Իրականացնել սկսնակ ուսուցիչների աշխատանքների անհատական վերահսկողություն:
7.4. Քննարկել դասալսումների և անհատական վերահսկողության արդյունքները համապատասխան ուսուցիչների հետ և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել մեթոդական աջակցություն:

8. Հավանություն տալ հոկտեմբեր ամսին «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով զեկուցման պլանավորմանը:
8.1. Զեկուցման բովանդակության մեջ ընդգծել դասավանդման արդյունավետ մեթոդների, սովորողների անհատական կարիքների հաշվառման և ուսումնառության որակի բարելավման հիմնական ուղղությունները:
8.2. Զեկուցման ներկայացումը հանձնարարել ՄՄ ղեկավարին:
8.3. Զեկուցման քննարկման ընթացքում ներկայացնել առաջարկություններ՝ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման և սովորողների անհատական առաջընթացի ուղղությամբ:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ _____ Հ. Փիրումյան

Քարտուղար՝ _____ Ա. Օհանյան

29.09.2026